առասպելական *Բագադիա* նախնու անունից (2.64), **C. Toumanoff**, *Studies in Christian*…, p. 327: Վրաստանի Բագրատունիներին վերաբերող մի աւելի ուշ աւանդութիւն, Կոնստանտին Ծիրանածնի կողմից յիշատակուած, այդ տոհմին նոյնպէս վերագրում է հրէական ծագում՝ Դաւիթ թագաւորից ստացուած (De administrando imperio, XLV, 2.8), տե՛ս **J. Markwart**, *Der Ursprung der iberischen Bagratiden*, Osteuropäische und Ostasiatische Streifzüge գրքում, Lipsie, 1903, S. 391-436: Տե՛ս նաեւ **Ա. Շահնազարեան**, *Բագրատունեաց նախարարական տոհմի ծագումը*, ՀՊՊԹ «Աշխատութիւններ» հտ. I, Երեւան, 1948, էջ 167-212, **C. Toumanoff**, *Studies in Christian*…, p. 327, **N. G. Garsoïan**, *The Epic Histories Attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmut'iwnk')*, Cambridge Mass., 1989, pp. 362-363:

30 Պրոֆեսոր Ռիւդիգեր Շմիտը 2004-ի մարտի 18-ին ինձ յղած նամակում սիրալիօրէն տեղեկացրեց իր հետեւեալ դիտարկումների մասին. Die Form -mit – r – (aus parth. –d-) ist nun typisch armenisch, und für einen armenischen Namen in Italien wäre natürlich griechische Vermittlung anzunehmen. Aber im Griechischen fehlen Zeugnisse für *Bagrat' bzw. Mit · Metathese *Bargat': Պրն. Շմիտն այն աւելի շուտ համարում է սեմական անուն:

31 Տե՛ս **M. Bang**, *Die Herkunft der römischen Sklaven*, Römische Mitteilungen, N 25 (1910), S. 220-251 դասական աշխատութիւնը:

32 **I. Kajanto**, *Minderheiten und ihre Sprachen*…, p. 84.

33 **Petron**, 48: tres bibliothecas habeo, unam Graecam alteram Latinam. Տե՛ս **P. Vidal-Naquet**, *Du bon usage de la trahison* (préface à Flavius Josèphe, La guerre des Juifs, tr. par P. Savinel, Paris 1977), pp. 17-18; **G. Traina**, *Il complesso di Trimalcione*, Venezia, 1991, pp. 3-8.

34 **M. Bang**, *Op. cit.*, p. 31 ներկայացուած ցուցակում հաւաքուած են ստրուկների աշխարհագրական ծագման մասին վստահաբար վկայուած բոլոր տեքստերը, բայց ընտրութիւնը բաւական պատահական է ընդհանուր եզրակացութիւններ անելու համար:

ԴՐՈՒԱԳ ՔՐԻՍՏՈՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՊԱՏԿԵՐԸ ԿՐՈՂ ՄԵԴԱԼԻՈՆՈՎ ՏԻՐԱՄՕՐ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Էդդա Վարդանեան

Տիրամօր պատկերման հազուագիւտ եւ հետաքրքրական մանրանկար ունի Մաշտոցի անուան Մատենադարանի 4997 Մաշտոց ծիսարանը, յայտնի՝ Վաղարշապատի Մաշտոց անուան տակ[1]: Մաշտոցը պատկանում է Կաթողիկոսական կոչուող տիպին եւ խորագրուած է՝ «Մաշտոց օրհնութեան սրբալոյս միւռոնի, եպիսկոպոսի եւ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման թագաւորի»: Այն ընդօրինակուել է 1461 թ. Վաղարշապատում, Զաքարիա Գ. Աղթամարցի կաթողիկոսի պատուէրով, որն այդ տարիներին զբաղեցրել է Աղթամարի եւ Էջմիածնի կաթողիկոսական աթոռները:

Մաշտոցը բովանդակում է կաթողիկոսական չորս կանոնները՝ Եպիսկոպոսաւրհնէք (3ա-50ա), Կանովն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն ամենայն Հայոց (51ա-74բ), Մեռոնօրհնէք (76ա-111բ), Կանովն եւ կարգաւորութիւն աւրհնութեան թագաւորի ըստ մեծի եկեղեցւոյն (112ա-132բ)[2]: Ձեռագիրն ունի հինգ մանրանկար, կատարուած փայլուն վարպետութեամբ: Առաջինը «Քրիստոս Էմմանուէլի պատկերը կրող մեդալիոնով Տիրամայրն» է (2բ), միւսները՝ «Եպիսկոպոսի ձեռնադրութիւն» (11բ), «Կաթողիկոսի ձեռնադրութիւն» (52բ), «Մեռոնօրհնէք» (75բ), «Թագաւորի օծում» (112բ), նախորդում են կանոններին: Իրենց նախօրինակը չունեցող, այս ծիսական մանրանկարները կաթողիկոսական կանոնների նկարազարդման բացառիկ օրինակներ են[3]: Մատեանը բացող Տիրամօր պատկերն առանձնայատուկ տեղ է գրաւում ձեռագրի գեղարուեստական յարդարանքի համակարգում: Նրա պատկերագրութեան դաւանաբանական եւ գաղափարական իմաստը, տուեալ ծիսարանի կոնտեքստում, մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում:

Տիրամայրը պատկերուած է հասակով մէկ կանգնած: Կրծքի առջեւ, երկու ձեռքով, բռնել է Քրիստոս Էմմանուէլի պատկերը կրող կլոր վահանակ՝ մեդալիոն: Տիրամօր երկու կողմերում գտնուող քառախորան վարդեակներում «Աստուածածին» եւ «Մայր Աստուծոյ» մակագրութիւններն են: Վերեւի երկու անկիւններում՝ երկնքի սեգմենտից դուրս եկող հրեշտակները խոնարհւում են, ձեռքերը պարզած օրհնութեան շարժումով (նկ. 1):

Աստուածամօր պատկերման տուեալ տարբերակը հազուագիւտ է հայկական արուեստում: Նրա պատկերագրութեան ակունքները տանում են դէպի 6-8-րդ դարերի «Գահին նստած Աստուածամայրը մանկան հետ» արեւելեան հնագոյն այն պատկերները, որոնցում մանուկ Քրիստոսը շրջապատուած է օվալաձեւ ճաճանչապսակով (մանդորլայով): Յաղթական բնոյթի այդ պատկերները արտայայտում են Աստծոյ Մարդեղութեան յայտնութենական էութիւնը, կամ, Ա. Գրաբարի խօսքերով, «Աստծոյ ներկայութիւնը Քրիստոսի կերպարանքով»[4]: Դրանցից են զպտական Բաուիտ վանքի (6-րդ դ.) եւ Հռոմի Սանտա Մարիա Անտիկուա եկեղեցու (8-րդ դարի կէս) որմնանկարները, Փարիզի ազգային գրադարանի 7-8-րդ դդ. ասորական մանրանկա-

© National Library of Armenia

ը[5], Սինայի 7-րդ դարի սրբապատկերը[6] եւ Էջմիածնի Աւետարանի «Մոգերի երկրպագութիւն» (7-րդ դար) մանրանկարը[7] (նկ. 5): Նոյնատիպ օվալաձեւ մանդորլա բռնած, դիմահայեաց կանգնած Տիրամօր պատկերներ հանդիպում են նաեւ 6-7-րդ դարերի բիւզանդական կնիքների վրայ[8]:

Ըստ Ա. Գրաբարի, մանուկ Քրիստոսի աստուածային ծագումը մատնանշող մանդորլան նոյն նշանակութիւնն ունի, ինչ վաղ քրիստոնէական շրջանի «Մոգերի երկրպագութիւն» պատկերներում յաճախակի հանդիպող «Աստուած մեզ հետ է» գրութիւնը[9]: Դա Եսայու մարգարէութիւնից վերցուած Էմմանուէլ անուան բառացի թարգմանութիւնն է (Է 14, տե՛ս նաեւ Մատթէոս Ա 23): Մանդորլան մեկնաբանւում է որպէս երկնային թագաւորի պատկերը երկրպագութեան համար ի ցոյց հանելու միջոց[10]: Եթէ նախաքրիստոնէական, մասնաւորապէս հռոմէական, աւանդութեան մէջ մանդորլայի կամ կլոր մեդալիոնի (clipeus) մէջ վերցուած պատկերը («imago clipeata») փառքի, յաղթութեան յաւերժացման իմաստ ունէր, ապա քրիստոնէական շրջանում այն ստանում է սրբազան պատկերին կամ, այլ կերպ ասած, սրբապատկերին երկրպագելու իմաստ[11]:

Յետպատկերամարտական շրջանում օվալաձեւ մանդորլան ամբողջապէս փոխարինւում է Քրիստոս-Էմմանուէլի կիսանդրին շրջանակող կլոր վահանակով՝ մեդալիոնով: Այդ մեդալիոնը կրող Տիրամայրը զատւում է «Աստուածամայրը մանկան հետ» կերպարից եւ դառնում՝ Յիսուսի Մարդեղացման դոգմատիկ պատկերագրութեան կենտրոնական պատկեր[12]: Այն մարմնաւորում է Եսայու մարգարէութեան իրագործումը՝ «Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ» (Է 14): Իսկ մեդալիոնը, առանձին վերցրած, մեկնաբանւում է որպէս Աստծոյ նախայաւիտեան Բանի՝ Լոգոսի, մարմնաւորման խորհրդանշական պատկեր[13]: Որպէս Աստծոյ ներկայութեան նշան, այն կրում է ոչ միայն Տիրոջ ծննդեան, այլեւ Աստուածութեան, Սուրբ Երրորդութեան եւ Երկրորդ գալստեան գաղափարները, որպէս Փրկագործութեան սկիզբ[14]:

Հարկ է նշել, որ մեդալիոնով Տիրամօր պատկերագրութիւնից դուրս են արեւմտեան ազդեցութիւն կրող «Աւետում» եւ «Մարիամի եւ Եղիսաբեթի հանդիպումը» պատմողական բնոյթի այն պատկերները, որոնցում Մարիամի գրկում պատկերուած Քրիստոսով մեդալիոնը ակնարկում է Տիրամօր ապագայ Աստուածամայրութիւնը[15]: Այդպիսի պատկերագրութիւն ունի Տրետեակովեան պատկերասրահի 12-րդ դարի «Աւետում» սրբապատկերը[16], իսկ հայկական մանրանկարչութեան մէջ՝ Աւագ մանրանկարչի 1337 թ. Աւետարանի «Մարիամի եւ Եղիսաբեթի հանդիպումը» տեսարանը, ուր երկու կանանց գրկում մեդալիոններ են. մէկը՝ Քրիստոսի, միւսը՝ Յովհաննէս Մկրտչի պատկերներով[17] (նկ. 7):

Վաղարշապատի Մաշտոցում պատկերուած մեդալիոնով Տիրամայրը պատկանում է վերը նշուած դոգմատիկ պատկերագրական տարբերակին: Այն ներկայացնում է բիւզանդական արուեստում տարածուած Նիկոպոյոս (“Nikopoios”, յաղթագործ) պատկերագրական տիպը, որը ճանաչում գտաւ Բիւզանդիայում 11-րդ դարի կէսերին, երբ 1031-ին Կոստանդնուպոլսում, Աստուածածնին նուիրուած Բլախերնոն եկեղեցու վերականգնման հետեւանքով, երեւան եկաւ 7-րդ դարի մի հնագոյն սրբապատկեր[18]: Այդ ժամանակից ի վեր, Նիկոպոյոսը բիւզան-

դական ամենապաշտելի սրբապատկերներից մէկն էր, եւ մեծապէս կարեւորւում էին նրա կատարած հրաշագործութիւնները[19]:

Նիկոպոյոսը համարուել է կայսերական տան պահապան սրբապատկերը (Palladium) եւ կայսերական զօրքի յաղթական խորհրդանիշը: Ըստ գրական աղբիւրների, սրբապատկերը կայսեր հետ միասին առաջնորդում էր բանակը: Նրա պահպանիչ եւ յաղթական յատկութիւնները գովերգուել են հիմներգութեան եւ ծիսական բանաստեղծութեան մէջ[20]: Այդ է պատճառը, որ Նիկոպոյոս Տիրամօր սրբապատկերը ուղղակիօրէն կապուեց կայսերական գաղափարախօսութեան հետ: Դա արտայայտուեց առաջին հերթին պաշտօնական պատկերագրութեան մէջ, ինչի մասին վկայում է դրամագիտական եւ կնքագիտական նիւթը: 11-րդ դարի կէսից, Նիկոպոյոս Տիրամայրը սիրուած մոտիւ է դրամների եւ կնիքների վրայ[21] (նկ 7): Ի դէպ, իր «Նիկոպոյոս» անունով այն պարտական է մի կնքագրոշմի, ուր պատկերն ուղեկցւում է «Յաղթանակ շնորհող Աստուածամայր» գրութեամբ[22]:

Նիկոպոյոսի կապը կայսերական գաղափարախօսութեան հետ արտայայտուեց նաեւ ձեռագրերի նկարազարդումներում: Այստեղ Նիկոպոյոս Տիրամայրն առկայ է կայսեր ինվեստիտուրայի (իշխանութեան սիմվոլիկ յանձնումը Քրիստոսի, Տիրամօր կամ հրեշտակի կողմից) պատկերներում: Այդպիսի օրինակ է Լուվրում գտնուող 15-րդ դարի ձեռագրի Մանուիլ II Պալէոլոգոս կայսեր ընտանեկան պատկերը: Այս մանրանկարում կայսեր ընտանիքը օրհնւում է Նիկոպոյոս Տիրամօր կողմից[23] (նկ. 8):

Վաղարշապատի Մաշտոցի մանրանկարում, Տիրամօր կերպարն ունի Նիկոպոյոս պատկերագրական տիպի բոլոր առանձնայատկութիւնները՝ երիտասարդ, կլորաւուն դէմք՝ թեթեւ ժպիտով, գլխաշորի ճակատամասում՝ Բեթղեհեմեան խաչաձեւ աստղը (Անխախտ կուսութեան խորհրդանիշ), որը կրկնւում է նրա ուսերին: Գլխաշորի եւ թիկնոցի յստակ արտայայտուած խիտ ծալքերը իջնում են ուղղաձիգ՝ նմանուելով ստուերագծերի[24] (նկ. 1): Նիկոպոյոս տիպի բնորոշ տարրերից են մենագիր-համառօտագրութիւնները[25], սակայն ամենաբնորոշը՝ մեդալիոնն է, որը Տիրամայրը բռնել է երկու ձեռքով:

Բիւզանդական արուեստում, Նիկոպոյոս հնագոյն տիպից սերում են պատկերագրական այլ տարբերակներ: Դրանցից է մեդալիոնով Օրանտ Տիրամայրը, որ անչափ սիրուած էր Բիւզանդիայում Կոմնենոսների օրօք եւ, ազդեցութիւն գործելով ուղղափառ աշխարհի արուեստի վրայ, ստացել է Պլատիտերա, Բլախերնիտիսսա, Պանագիա, Ռուսաստանում՝ Զնամենիէ, անուանումները[26]: 13-15-րդ դարերում տարածում ստացաւ Նիկոպոյոսի մի տարբերակ, որտեղ Յիսուսը պատկերուած է առանց մեդալիոնի[27], օրինակ՝ Լուվրի ձեռագրի մանրանկարում (նկ. 8): Պատկերագրական այդ տարբերակները տարածում գտան ինչպէս սրբապատկերներում, այնպէս էլ՝ մոնումենտալ գեղանկարչութեան մէջ: Այսպէս, 11-12-րդ դարերում մեդալիոնով Օրանտ Տիրամօր պատկերը զետեղւում է բիւզանդական տաճարների աւագ խորանում՝ գեղարուեստօրէն արտայայտելով եւ աստուածաբանօրէն միաւորելով Մարդեղութեան եւ Հաղորդութեան խորհուրդները[28]: Սրբապատկերներում, մեդալիոնով Տիրամայրը խորհրդանշում է Անարատ յղիութեան նշանակներից մէկը՝ Անկէզ մորենին (Ելք, 3, 2-5)[29]: Այդ պատկերա-

© National Library of Armenia

գրութիւնը, որը ընդունուած էր յատկապէս Անկէզ մորենու պաշտամունքի վայր՝ Սինայի Սբ. Կատարինէ վանքում[30] (նկ. 9), այդտեղից տարածուեց արեւելաքրիստոնէական արուեստում (Եգիպտոս, Պաղեստին, Սիրիա, Կապադովկիա):

Աստծոյ Բանի՝ Լոգոսի, Մարդեղացման եւ Աստուածութեան ներկայութիւնը խորհրդանշող մեդալիոնով Տիրամօր պատկերագրութիւնը միանգամայն համահունչ է հայ Եկեղեցու հիմնակարգային դրոյթներին[31]: Հայ Եկեղեցու որդեգրած քրիստոսաբանական տեսակէտը կատարեալ ձեւով արտայայտուած է Եպիփան Կիպրացու (Դ դար) Աւետարանի Մեկնութեան մէջ, Մարիամի Աւետմանը նուիրուած հետեւեալ հատուածում. «... Սրբութեան սիրով եւս առաւել մաքրէ եւ տաճարացուցեալ յաւրինէ զքեզ եւ արժանաւորէ զքեզ լինել Մայր Աստուծոյ Բանին որ է ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն յառաջ քան զյաւիտեանս՝ ծնեալ ի Հաւրէ ի փառս Հաւր եւ Հոգւոյն, եւ այժմ ի քէն մարմնանայ բնութեանցն միաւորութեամբ, միութեամբ, անձնաւորութեամբ, էութեամբ եւ ոչ փոփոխմամբ, այլ խառնմամբ: Արդ, որ շաւշափեցեաւ նոյն ինքն է Աստուած Բանն՝ ծնեալ ի Հաւրէ անմայր յառաջ քան յաւիտեանս եւ անժամանակ, եւ այսաւր ի սրբոյ Կուսէն՝ անհայր եւ ընդ ժամանակաւ»[32]: Մեր մանրանկարում առկայ «Աստուածածին» եւ «Մայր Աստուծոյ» պատուանունները կոչում են տեսնել Աստծոյ մարդեղութեան յայտնութենական խորքը[33]: Այդ «աստուածատեսութիւնն» են ընդգծում մանրանկարի վերին անկիւնների հրեշտակները, որոնք բնորոշ են Տիրամօր դոգմատիկ պատկերներին ընդհանրապէս[34]:

Այդուհանդերձ, մեդալիոնով Տիրամօր պատկերը հազուագիւտ է հայկական պատկերագրութեան մէջ, որի համար առաւել բնորոշը «Գահին նստած Աստուածամայրը մանկան հետ» տարբերակն է[35]: Եթէ նկատի չունենանք ԺԱ.-ԺԲ. դդ. Բիւզանդական կայսրութեան հայ պաշտօնեաների կնիքները, որոնք կրում են Նիկոպոյոս Տիրամօր պատկերը[36], մեդալիոնով Տիրամօր պատկերումը էպիզոդիկ բնոյթ է կրում: Այսպէս, մեդալիոնով Օրանտ Տիրամօրը տեսնում ենք կիլիկեան մանրանկարչութեան կոթող Հեթում իշխանի Ճաշոցում (1286), Մովսէսին եւ Անկէզ մորենին պատկերող կոմպոզիցիայում[37] (նկ. 10): ԺԵ. դարում Նիկոպոյոս Տիրամօր պատկերագրական կրճատ խմբագրութիւնը զետեղւում է «Հեսսէի ծառը» տեսարանում, նախ՝ Մկրտիչ Նաղաշի Աստուածաշնչում[38], իսկ այնուհետեւ՝ Վանայ լճի աւազանի գրչակենտրոններում ստեղծուած ձեռագրերում: Այստեղ պատկերն արտայայտում է ոչ միայն Քրիստոսի Ծննդաբանութիւնը, այլեւ ունի Աստուածայայտնութեան եւ Բանի՝ Լոգոսի Մարդեղացման իմաստ[39]: Սակայն, հայկական յայտնի օրինակներից, պատկերագրօրէն առաւել ամբողջականը Վաղարշապատի Մաշտոցի մանրանկարն է: Ունենալով տուեալ տիպին բնորոշ բոլոր տարրերը եւ կատարուած լինելով վեհաշուք ոգով, այն ձեռք է բերում սրբապատկերային հնչեղութիւն[40]:

Այժմ տեսնենք, թէ ինչո՞վ է պայմանաւորուած Տիրամօր պատկերագրութեան այս տիպի զետեղումը Վաղարշապատի Մաշտոցում եւ ո՞րն է նրա կապը ձեռագրի միւս մանրանկարների հետ: Ձեռագիրը դիտարկենք իր ժամանակաշրջանի եկեղեցա-քաղաքական կոնտեքստում:

Ձեռագրի պատուիրատուն Զաքարիա Գ. Աղթամարցի (1434-1464) կաթողիկոսն է: Սերելով Արծրունիների թագաւորական տան Սեֆեդինեան տոհմից, նա համարում էր իրեն թագաւորազն՝ «ի թոռանց

եւ ի շառաւիղէ արքային Գագկայ»[41]: Օտար տիրապետութեան պայմաններում, նա որոնում էր Վասպուրականում Արծրունեաց թագաւորական աթոռը վերականգնելու ուղիները: Նպատակը իրագործելու համար բարենպաստ էր 1441 թուականի Ազգային ժողովը, որի արդիւնքում հայոց Կաթողիկոսական Աթոռը վերահաստատուեց Էջմիածնում: 1461 թուականին, ունենալով թուրքմեն տիրակալ Ջհանշահի աջակցութիւնը, Զաքարիային յաջողւում է միաւորել Էջմիածնի եւ Աղթամարի կաթողիկոսութիւնները եւ դառնալ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Նոյն 1461 թուականին, Վաղարշապատում նա պատուիրում է Մաշտոցի ընդօրինակութիւնը: Ձեռագրի ստեղծումը նպատակ է հետապնդում վաւերացնելու Զաքարիա Աղթամարցու համազգային կաթողիկոսութիւնը եւ կապուած է նրա կողմից թագաւոր օծելու ծրագրի հետ: Անակնկալ մահուան պատճառով[42], Զաքարիա կաթողիկոսը չկարողացաւ իրագործել այդ ծրագիրը: 1466 թուականին, նրա հետեւորդը՝ Ստեփանոս Ե. կաթողիկոսը (1465-1489), նոյն Ջհանշահի օգնութեամբ, թագաւոր օծեց Զաքարիայի եղբօրորդուն՝ Սմբատ Սեֆեդինեանին:

Ինչպէս ասուեց, Վաղարշապատի Մաշտոցը կաթողիկոսական տիպի է, այսինքն՝ պարունակում է բացառապէս կաթողիկոսին վերապահուած ծէսերը: Ձեռագրի մանրանկարներից չորսը կաթողիկոսական այդ ծէսերի պատկերման բացառիկ օրինակներ են (նկ. 2 եւ 3): Կատարուած բարձր վարպետութեամբ, այդ մանրանկարները ներկայացնում են նաեւ պատմական անձանց: Զաքարիա կաթողիկոսի դիմանկարը ճանաչելի է բոլոր չորս մանրանկարներում: Նա ներկայացուած է որպէս վառ արտայայտուած ուժեղ բնաւորութեան տէր, առաքինի, արքայազարմ կաթողիկոս, համահունչ այն կերպարին, որը մեզ հրամցնում են ժամանակակից յիշատակարանները[43]: Եպիսկոպոսօրհնէքի տեսարանում նա Գրիգոր Լուսաւորչի Աջով օրհնում է ձեռնադրուող եպիսկոպոսին, Կաթողիկոսօրհնէքում՝ Լուսաւորչի Աջով օրհնւում է ինքը՝ Զաքարիան: Յաջորդ մանրանկարը ներկայացնում է Սուրբ Միւռոնի օրհնութիւնը (նկ. 3): Ուշագրաւ է, որ այդ մանրանկարի թերթի հակառակ կողմում (75ա), կաթողիկոսը պատուիրել է կազմել Սբ. Միւռոնի պատրաստման 40 բոյսերի եւ նիւթերի հայագիր անունների ցուցակը, որը մինչ այժմ յայտնի ամենահինն ու ամենաամբողջականն է[44]: Ձեռագրի վերջին մանրանկարում պատկերուած է թագաւորի օծումը. կաթողիկոսը օրհնում է Սբ. Սեղանի առջեւ ծնկի իջած արքային (նկ. 2):

Ուշադրութեան են արժանի նաեւ ձեռագրի թեմատիկ լուսանցազարդերը՝ որոնք սակաւաթիւ միւս կանոնների թերթերում[45], բայց առատ են թագաւորի օրհնութեան կանոնի տեքստում եւ ներկայացնում են արարողութեանը վերաբերող ծիսական առարկաներ՝ Միւռոնի սափորը, որի պարունակութեամբ օծում են թագադրուող արքային (120բ), նրան յաձնուող սուրը (127ա), մատանին ու գաւազանը (128ա), թագը (129ա), այնուհետեւ պատկերուած են Աստծոյ օրհնող աջը (129բ), թագաւորական գահը (130ա), եւ, վերջում, Հաղորդութեան սկիհը՝ խաչադրոշմ նշխարով (132բ): Լուսանցազարդերի նման տեղաբաշխումը ձեռագրում յուշում է, որ առաւել կարեւորուել է թագաւորի օծման արարողութեանը նուիրուած հատուածը:

Այսպիսով, Վաղարշապատի Մաշտոցի մանրանկարները փաստում են, որ 15-րդ դարում Վասպուրականում պատկերը

© National Library of Armenia

քաղաքական-գաղափարական մեծ նշանակութիւն է ունեցել: Ձեռագիրն ընկալւում էր որպէս պաշտօնական պատկերագրութեան կրող, ինչը արտայայտուեց նաեւ դիմանկարի արժէքաւորման մէջ: Վաղարշապատի Մաշտոցը կարելի է համեմատել «օծման դրամների» հետ, որոնք պետական համակարգի առկայութեան դէպքում հատւում էին իրադարձութիւնը նշանաւորելու համար: Այսինքն, Վաղարշապատի Մաշտոցը ոչ միայն ծիսական ձեռագիր է, այլեւ պատկերների միջոցով հաստատում է աշխարհիկ եւ հոգեւոր գերագոյն իշխանութեան գաղափարը, յանձինս Զաքարիա կաթողիկոսի եւ թագաւորի, որի օծումը պէտք է լինէր Զաքարիայի առաքելութեան ամենակարեւոր հանգրուանը: Ահա այդ իմաստով է, որ ձեռագիրը բացող Տիրամօր պատկերը բազմակողմանի եւ ոչ միանշանակ դեր է ստանձնում:

Աստուածամօր պատկերումը ձեռագրերի սկզբում, այդ թւում նաեւ ծիսարանների, նորութիւն չէ[46]: Յայտնի է, որ կիլիկեան թագաւորների եւ ազնուականների կողմից պատուիրուած ձեռագրերում, Տիրամօր պատկերը յաճախ զետեղւում է կտիտորական կոմպոզիցիաներում[47]: Նրա առկայութիւնը Սեֆեդինեան ազնուական ընտանիքին պատկանող ձեռագրում նախ եւ առաջ պայմանաւորուած է Տիրամօր բարեխօսի եւ պահապանի դերով: Միւս կողմից, Տիրամօր հետ անխզելիօրէն կապւում է Եկեղեցու խորհուրդը, որի ամրութեան եւ գերիշխանութեան, նաեւ՝ թագաւորի հովանու տակ բարգաւաճման նպատակ էր հետապնդում Զաքարիա կաթողիկոսը[48]:

Սակայն, հարց է մնում Վաղարշապատի Մաշտոցի Տիրամօր պատկերագրութեան ոչ տիպիկ, բայց, անկասկած, ոչ պատահական ընտրութիւնը:

Արդէն գիտենք, որ Բիւզանդիայում Նիկոպոյոս Տիրամօր սրբապատկերն ունէր պահապանիչ եւ յաղթաբեր հոգեւոր գործառոյթ: Այսինքն, այն ուղղակիօրէն կապուած էր կայսեր իշխանութեան աստուածային հովանաւորութեան գաղափարի հետ: Այդ զուգորդումը երեւում է նաեւ հայկական թագուորօրհնէքի կանոնի տեքստից, ուր Անկէզ. մորենին (Անարատ յղիութեան խորհրդանիշը, պատկերագրութեան մէջ արտայայտուած Նիկոպոյոս Տիրամօր տիպով) յիշատակւում է թագաւորին շնորհուած երկնային հովանաւորութեան առիթով. «Աստուած Արարիչ ... Հայեա ի սա (թագաւորին - Է. Վ.) գթութեամբ, որպէս ի ծառայն քո Մովսէս ի մորենւոյն, որ վառեալ էր եւ ոչ այրէր: Որպէս զաւրացուցեր զՅեսու Նաւեայ ի պատերազմունսն եւ զԳեդէովն ի վերայ թշնամեացն եւ զՍամուէլ ի տաճարն»[49]: Վաղարշապատի Մաշտոցում Նիկոպոյոս Տիրամօր պատկերը կարող է մեկնաբանուել որպէս «ինվեստիտուրայի», Աստծոյ կողմից իշխանութեան սիմվոլիկ յանձնման խորհրդանիշ: Աստուածայայտնութեան տօնին թագադրութեան ծէսը կատարելու հայկական սովորութիւնը կարող է տուեալ պատկերագրութեան ընտրութեան պատճառ լինել մեր ձեռագրում, այնպէս, ինչպէս Լեւոն Ա-ի օծման առիթով հատուած դրամներում պատկերուած է նրա թագադրումը Տիրամօր կողմից[50]: Բացառուած չէ, որ Զաքարիա կաթողիկոսի կողմից պատրաստուող թագադրութիւնը, սովորութեան համաձայն, նախատեսուած է եղել (իսկ 1466 թ., ժամանակակից յիշատակարանների վկայութեամբ, այն հաւանաբար եւ տեղի է ունեցել) յունուարի 6-ին[51]:

Սակայն, Աստուածայայտնութեան տօնին հայ Եկեղեցին միասնաբար նշում է Քրիստոսի թէ՛ Ծնունդը եւ թէ՛ Մկրտութիւնը, որի ժամանակ մեծ հանդիսաւորութեամբ կատարւում է Ջրօրհնէքի արարողութիւնը՝ Յորդանանում Քրիստոսի մկրտութեան յիշատակութիւնն ու օրինակը[52]: Եւ քանի որ Աստուածայայտնութեան օրը կատարուող թագաւորի օծումը զուգորդւում էր Քրիստոսի մկրտութեան հետ, այն նոյնպէս ընկալւում էր որպէս իւրօրինակ «աստուածայայտնութիւն», խորհրդանշելով թագաւորական իշխանութեան աստուածային ծագումը[53]: Այսպիսով, Աստուածայայտնութեան տօնը միաւորում է Յիսուսի Մարդեղացման եւ Մկրտութեան խորհուրդները, որոնց ընդհանրութիւնը աստուածաբանօրէն ձեւակերպուած է այսպէս. «Աստծոյ միածին Որդին Սուրբ Հոգու ներգործութեամբ է աշխարհ գալիս, մաքրելով Տիրամօր արգանդը Սուրբ Հոգու օրհնեալ ներկայութեամբ: Սուրբ Հոգու այդ ներկայութեամբ է օծւում Քրիստոս մկրտութեան պահին»[54]:

Սուրբ Հոգու մասնաւոր գործառոյթը՝ շնորհաբաշխութիւնը[55] իրագործւում է օծութեան սրբազան իւղի՝ Միւռոնի միջոցով: Սուրբ Հոգու շնորհների նշանակ՝ Սբ. Միւռոնը Աստծոյ ներկայութեան կնիքն է: Այն առարկայացած, նիւթականացած կերպով խորհրդանշում է Սուրբ Հոգին, իսկ նրա ներգործութիւնը՝ մաքրագործում, նորոգում[56]: Հայ աստուածաբանների կողմից այն անուանւում է Աստուածութեան եւ Աստծոյ որդու խորհրդապատկեր, ինչը լաւագոյնս արտայայտուեց Գրիգոր Նարեկացու խօսքերում՝ «Այս նիւթեղէն զանգուածը պանծալի պատկերն է երկնքի Արարչիդ» (Մատեան ողբերգութեան, Բան ՂԳ, 4): Վաղարշապատի Մաշտոցի Միւռոնի օրհնութեան կանոնի անուանաթերթի գեղարուեստական յարդարանքը հաստատում է աստուածաբանական այդ դրոյթը, որի վկայութիւնն է անուանաթերթի կիսախորանում տեղադրուած Քրիստոս Էմմանուէլի պատկերով մեդալիոնը (նկ. 4): Բանի՝ Լոգոսի մարմնաւորման խորհրդանշական պատկեր, մեդալիոնը Աստծոյ եւ մարմնաւորուած Բանի՝ Քրիստոսի խորհրդապատկերը կապում է Սուրբ Հոգու նշանակ Սուրբ Միւռոնի հետ: Այդ նոյն Քրիստոս-Էմմանուէլի պատկերը կրող մեդալիոնն է Տիրամօր պատկերի իմաստային շեշտը:

Հայկական ձեռագրերում Քրիստոս Էմմանուէլով մեդալիոնը կիրառւում է այն դէպքերում, երբ պէտք է շեշտել Սուրբ Հոգու ներգործութեամբ իրականացուած Յիսուսի մարդեղացման գաղափարը[57]: Յաճախ այն պատկերւում է (հիմնականում 13-14-րդ դդ. ձեռագրերում) Ճաշոցներում, Աստուածայայտնութեան եւ Աւետման տօների անուանաթերթերի կիսախորաններում (նկ. 11), Քրիստոսի ծննդաբանութեամբ սկսուող Մատթէոսի Աւետարանի անուանաթերթի կիսախորանում (նկ. 12) եւ Յովհաննէսի Աւետարանի անուանաթերթի կիսախորանում, որպէս Բանի մարդեղութեան պատկեր, որը համապատասխան է աւետարանական տեքստի առաջին բառերին (Ա 1)[58]:

Ինչպէս ասուեց, հայ Եկեղեցում շնորհակրութեան գաղափարը անխզելիօրէն կապուած է Սուրբ Միւռոնի հետ: Սուրբ Հոգու շնորհաբաշխութիւնը[59] ստացւում է Սուրբ Միւռոնով օծուելով, ինչը նշուած է թէ՛ Միւռոնօրհնէքի կանոնում[60], եւ թէ՛ Սուրբ Միւռոնով սրբագործուող կանոններում[61]: Սուրբ Միւռոնով կատարուող ծէսերը՝ Ջրօրհնէքը, Մկրտութիւնը, հոգեւորականի (քահանայից մինչեւ կաթողիկոս) եւ թագաւորի օծումը, գրեթէ բոլորը ընդգրկուած են այս Մաշտոցում: Այսինքն, օծման խորհուրդն է մեր ձեռագրի պատկերային

© National Library of Armenia

համակարգի ներքին կապն ու իշխող գաղափարը: Ելնելով հայ աստուածաբանութեան այն դրոյթից, որ Միւռոնը Աստուածութեան խորհրդապատկերն է[62], *մեդալիոնի մէջ վերցուած Քրիստոս-Էմմանուէլի պատկերը, կարող է մեկնաբանուել որպէս Սուրբ Միւռոնի ներգործութեամբ ստացուած Աստծոյ շնորհների մարմնաւորուած պատկեր: Մեր ձեռագրի մեդալիոնը բռնած Տիրամայրը հանդիսանում է «աստուածային շնորքի կամուրջը - կապը երկու աշխարհների միջեւ, որը իրականանում է Քրիստոսի յայտնուելու պահին»*[63]: *Զետեղուելով պատմա-ծիսական մանրանկարների շարքում եւ ուղղակիօրէն կապուելով Սուրբ Միւռոնով սրբագործուող կաթողիկոսական չորս կանոներին, Տիրամօր պատկերը ձեռագրի նկարազարդման համակարգին տալիս է եզակի գաղափարական հնչեղութիւն:*

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Հ. Հայրապետեան,** «*Վաղարշապատի Մաշտոցը*», *Էջմիածին,* 1994 թ., յունիս-յուլիս, էջ 57-67:

2 Այդ կանոնները չեն ընդօրինակուել Մաշտոց ծիսարանի միւս կանոնների շարքում, այլ գլխաւորապէս զետեղուել են առանձին գրքով՝ միայն Կաթողիկոսական Մաշտոցներում, *Սրբալոյս Միւռոն,* Սբ. Էջմիածին, 2001, էջ 18-22:

3 **E. Vardanyan,** "Le Rituel *Maštoc'* dit "de Vałaršapat": l'imagerie officielle de l'enluminure du Vaspurakan au XVe siècle", Revue des Etudes Arméniennes, (պատրաստւում է տպագրութեան):

4 **A. Grabar,** *Martyrium,* t. II, *Iconographie,* Paris, 1946, pp. 174-176.

5 Փարիզի Ազգային գրադարան, Syr. 341, տ'ես J. Leroy, *Les manuscrits syriaques à peintures conservés dans les bibliothèques d'Europe et d'Orient,* Paris, 1964, Pl. 51, 2.

6 **K. Weitzmann,** *The monastery of St. Catherine at Mount Sinai.* The Icons, v. I, Princeton, 1976, p. 51, cat. N° B.28.

7 Մատենադարան ձեռ. 2374, 229ա

8 **A. Grabar,** *L'Iconoclasme byzantin,* Paris, 1984, p. 41, fig. 52, 53, 56.

9 Նոյն տեղում:

10 **Th. F. Mathews,** *"The Early Armenian Iconographic program of the Ejmiacin Gospel", East of Byzantium: Syria and Armenia in the Formative Period,* Dumbarton Oaks Symposium, 1980, pp. 205-209.

11 **G. W. Elderkin,** *"Shield and Mandorla",* American Journal of Archaeology, XLII, 2 (1938), pp. 227-236.

12 **A. Grabar,** *"L'imago clipeata chrétienne", L'art de la fin de l'Antiquité et du Moyen Age,* t. I, Paris, 1968, pp. 611-612.

13 *Lexikon der christlichen Ikonographie,* Bd I, ed. Herder, 1968 : 390-391.

14 **A. Grabar,** *"L'imago clipeata chrétienne",* pp. 607-609 ; 611-612.

15 **A. Grabar,** *Martyrium,* pp. 180-181; **C. Mango,** *"The Chalkopratеia Annunciation and the Pre-Eternal Logos", Δελτιον της χριστιανικης αρχαιολογικης εταιρειας* (1993–1994), Αθηνα, p. 165-170.

16 **В. Лазарев,** *История византийской живописи,* т. II, Москва, 1948, илл. 213.

17 Մատենադարան ձեռ. 212, 157ա, *Armenian Miniatures of the 13th and 14th centuries,* Leningrad, 1984, fig. 18.

18 *Նիկոպոյոս Տիրամօր պատկերագրական տիպի մասին,* տե՛ս **W. Seibt,** *"Der Bildtypus der Theotokos Nikopoios zur Ikonographie der Gottesmutter-Ikone, die 3031/31 in der Blachernenkirche wiederaufgefunden Wurde", Byzantina,* t. 13 (1), Thésalonique, 1985, pp. 550-564 ; **E. Sendler,** *Les icones byzantines de la Mère de Dieu,* Paris, 1992, pp. 155-159, "Virgin Nikopoios", *The Oxford Dictionary of Byzantium,* ed. Al. Kazhdan, v. 3, New York, Oxford, 1991, pp. 2175-76.

19 **E. Sendler,** *Նշ. աշխ.,* էջ 155-159:

20 *Նոյն տեղում,* էջ 156, **C. Jolivet-Lévy,** *"L'image du pouvoir dans l'art byzantin à l'époque de la dynastie Macédonienne, (867-1056)", Byzantion,* t. LVII (1987), p. 447.

21 **W. Seibt,** *Նշ. աշխ., Catalogue of the Byzantine Coins in the Dumbarton Oaks Collection and in the Whittemore Collection,* v. III, part 2, Pl. XLVII, fig. 19.1-19.4.

22 **W. Seibt,** *Նշ. աշխ.,* էջ 551-556:

23 **Cf. Byzance,** *L'art byzantin dans les collections publiques française,* Paris, 1992, N°356, pp. 463-464.

24 **W. Seibt,** *Նշ. աշխ.,* էջ 557:

25 Բիւզանդական օրինակներում Մ/Θ կամ ΜΡ/ΘΥ մենագրերը 11-րդ դարից կանոն են դառնում Նիկոպոյոս տիպի համար, **W. Seibt,** *Նշ. աշխ.,* էջ 558:

26 *Lexikon der christlichen Ikonographie,* Bd III, ed. Herder, 1971, pp. 156-181; *"Types of the Virgin Mary".* The Oxford Dictionary of Byzantium, ed. Al. Kazhdan, v. 3, New York, Oxford, 1991, pp. 2175-76.

27 Ամենամեծ յարգանք վայելող սրբապատկերներից է համարւում Վենետիկի Սան Մարկո տաճարի «Մադոննա Նիկոպէիան»: Տիրամայրը պատկերուած է մինչեւ գօտկատեղը, Քրիստոսն, ընդհակառակը, գրեթէ ամբողջութեամբ եւ առանց մեդալիոնի: Տիրամօր դիմագծերը արեւելեան հնչեղութիւն ունեն: Ենթադրւում է, որ սրբապատկերը ստեղծուել է Կոստանդնուպոլսում Կոմնենոսների ժամանակ, կրկնօրինակուել է կայսեր պալատում գտնուող Նիկոպէիայից, եւ 13-րդ դարում բերուել է Վենետիկ, *Il Tresoro di San Marco, Firenze,* 1971, Tav. XIII, XIV.

28 **B. Pitarakis,** *"À propos de l'image de la Vierge orante avec le Christ-Enfant ",* Cahiers Archéologiques, 48, Paris, 2000, pp. 45-58.

29 Անկէզ մորենին Տիրամօր հինկտակարանային այլաբանութիւններից մէկն է եւ ընկալւում է որպէս նրա նախատիպ, «*Գիրք տղայութեան Քրիստոսի*», գլ. Ե, Թանգարան հայկական Հին ու Նոր դպրութեանց, հտ. Բ, Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 16: **Th. F. Mathews,** *"The Early Armenian Iconographic program of the Ejmiacin Gospel",* p. 205.

30 Նախ՝ Սինայի 7-րդ դ. սրբապատկերը (**K. Weitzmann,** *Նշ. աշխ.*), իսկ այնուհետեւ՝ 12-15-րդ դարերի սրբապատկերների մի խումբ ներկայացնում են մեդալիոնով Տիրամօրը՝ Սինայի վանքի հետ կապուած պատմական անձանց (յայտնի վանականներ, պատրիարքներ) կամ սրբերի կողքին, **G. et M. Sotiriou,** *Icones du Mont Sinaï,* t. 1 et 2, Athènes, 1956-1958, pp. 236-237, 244-245, fig. 155, 158, 163.

31 **Th. F. Mathews,** *"The Early Armenian Iconographic program of the Ejmiacin Gospel",* p. 209.

32 Մեջբերուած է **Յ. Քէոսէեան,** *Դրուագներ հայ միջնադարեան արուեստի Աստուածաբանութեան,* Սբ. Էջմիածին, 1995, էջ 282:

33 Նոյն տեղում, էջ 233:

34 **A. Grabar,** *L'Iconoclasme byzantin,* pp. 252-257.

35 **Th. F. Mathews,** *"The Genius of the Armenian Painter",* Treasures in Heaven, Armenian Art, Religion and Society, The Pierpont Morgan Library, New York, 1998, pp. 163-175.

36 **C. Mutafian,** *Le Royaume arménien de Cilicie,* Paris, 1993 p. 22; *Byzantine Seals from the collection of George Zacos,* Part II, Auction 132, ed. Spink, London, 1999, NN 119, 120, 132, 134.

37 Մատենադարան ձեռ. 979, 229ա, տե՛ս **S. Der Nersessian,** *Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia.* (From the Twelfth to the Fourteenth Century), 2 vol., Washington, 1993, pp. 120-121, fig. 493.

38 Վենետիկ, Մխիթարեան միաբանութեան Մատենադարան, ձեռ. 280/10, 544բ:

39 **Է. Վարդանեան,** «*Հինկտակարանային թեմաները Աւետարանների նկարազարդման մէջ (Վասպուրականի 15-17-րդ դարերի ձեռագրերի նիւթերով)*»,- Աստուածաշնչեան Հայաստան, Օշական, 1999 (անտիպ):

40 Տե՛ս **Հ. Յակոբեան,** *Հայոց Տէրունական սրբապատկերները,* Երեւան, 2003, էջ 83: Հեղինակը քննում է Վաղարշապատի Մաշտոցից 1471 թուականին արուած ընդօրինակութիւնը:

41 Տե՛ս *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ,* հտ. Բ, Երեւան, 1958, էջ 172, 181:

42 Զաքարիա կաթողիկոսը մահացել է 1464 թուականին, թունաւորուելով իր հակառակորդների կողմից, տե՛ս նոյն տեղում, էջ 223, **Վ. Յակոբեան,** *Մանր ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ.,* հտ. 1, Երեւան, 1951, էջ 143:

43 *ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ,* էջ 117-118, 179:

44 *Սրբալոյս Միւռոն,* էջ 68-85:

45 Նախորդ կանոնների տեքստում տեսնում ենք եպիսկոպոսի ձեռնադրութեան արարողութեանը վերաբերող Աւետարանը (15ա), Կաթողիկոսի ձեռնադրութեան կանոնում՝ աղաւնակերպ Սուրբ Հոգին (52ա), տաճար (63բ), սրբազան զգեստներ (72բ), եւ Սբ. Միւռոնի օրհնութեան կանոնում՝ աղաւնակերպ Սուրբ Հոգին (84բ) եւ ձիթենի (100բ):

46 Տե՛ս Սարգիս Պիծակի 1283 թ. Սաղմոսարանի (Լոնդոն, Բրիտանական գրադարան, Or. 13804) գահին բազմած Տիրամօր Մանկան հետ պատկերը, տե՛ս **S. Der Nersessian,** *նշ. աշխ.,* նկ. 649:

47 **Th. F. Mathews,** *"The Genius of the Armenian Painter",* pp. 168-172; **S. Der Nersessian,** *նշ. աշխ.,* նկ. 646-647:

48 Տիրամայրը, որպէս երկրային եկեղեցու խորհրդակիր հայ աստուածաբանութեան մէջ, տե՛ս **Յ. Քէոսէեան,** *նշ. աշխ.,* էջ 232-236:

49 **Դերենիկ աբեղայ Դաւթեան,** *Թագուորհնէքի կանոնը հայ եկեղեցում* (վարդապետական թեզ), Սբ. Էջմիածին, 2000, էջ 79 (անտիպ):

50 **D. Kouymjian,** *"The Iconography of the "Coronation" Trams of King Levon I",* Armenian Numismatic Journal, n°4 (1978), Los Angeles, 1980, pp. 67-74.

51 Այդ մասին տե՛ս **E. Vardanyan,** "Le Rituel *Maštoc'* dit "de Vałaršapat": l'imagerie officielle de l'enluminure du Vaspurakan au XVe siècle".

52 *Սրբալոյս Միւռոն,* էջ 45:

© National Library of Armenia

53 Կայսեր թագադրութեան եւ Քրիստոսի Մկրտութեան միջեւ զուգահեռը տարածուած էր նաեւ Բիւզանդիայում, այդ մասին տե՛ս **C. Jolivet-Lévy**, *նշ. աշխ.*, էջ 448:

54 **Յ. Քէոսէեան**, *նշ. աշխ.*, էջ 224:

55 Նոյն տեղում

56 *Սրբալոյս Միտոն*, էջ 5-16:

57 Բիւզանդական տաճարներում աւագ խորանում զետեղուած մեդալիոնով Տիրամօր պատկերը յաճախ զուգակցւում է առանձին պատկերուած Էմմանուէլ-Քրիստոսով մեդալիոնի հետ, ինչը տեսողական կապ է ստեղծում Մարդեղացման եւ Հաղորդութեան խորհուրդների միջեւ, երկուսն էլ որպէս Սուրբ Հոգու ներգործութեան արդիւնք եւ շնորհակրութեան արտայայտութիւն, **B. Pitarakis**, *նշ. աշխ.*, էջ 49-50, նկ. 8:

58 Տե՛ս **S. Der Nersessian**, *նշ. աշխ.*, նկ. 9, 428, 430, 516, *Armenian Miniatures of the 13th and 14th centuries*, fig. 157; **В. Казарян**, **С. Манукян**, *Матенадаран*, т. I, Москва, 1991, илл. 353, 383; **M. Janashian**, *Armenian Miniature Painting of the Monastic Library at San Lazzaro*, Venice, 1966, Pl. LII, b. Հայկական Մաշտոցներում վաղ օրինակներից է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Մատենադարանի թիւ 1657 ձեռագրի անուանաթերթի պատկերը, տե՛ս **M. Janashian**, *Նշ. աշխ.*, Pl. LXXXI.

59 **Յ. Քէոսէեան**, *նշ. աշխ.*, էջ 224:

60 *Սրբալոյս Միտոն*, էջ 33-43:

61 Նոյն տեղում, էջ 44-49:

62 Նոյն տեղում, էջ 5-16:

63 **Յ. Քէոսէեան**, *նշ. աշխ.*, էջ 232:

նկ. 1. Տիրամայր, Վաղարշապատի Մաշտոց, 1461, Մատենադարան ձեռ. 4997, 2բ:

նկ. 2. Թագաւորի օծումը, Վաղարշապատի Մաշտոց, 1461, Մատենադարան ձեռ. 4997, 112բ:

նկ. 3. Սբ. Միտոնի օրհնութիւնը, Վաղարշապատի Մաշտոց, 1461, Մատենադարան ձեռ. 4997, 75բ:

նկ. 4. Սբ. Միտոնի օրհնութեան կանոնի անուանաթերթը, Վաղարշապատի Մաշտոց, 1461, Մատենադարան ձեռ. 4997, 76ա:

© National Library of Armenia

Նկ. 5. Մոգերի երկրպագութիւն, 7-րդ դար, Էջմիածնի Աւետարան, Մատենադարան ձեռ. 2374, 229ա:

Նկ. 6. Բիւզանդական արծաթէ դրամ Նիկոպոյոս Տիրամօր պատկերով, 1034-1042, Բիւզանդական դրամների հաւաքածոյ, Դումբարտոն Օկս, Վաշինգտոն:

Նկ. 7. Մարիամի եւ Եղիսաբեթի հանդիպումը, Աւետարան, 1337, Մատենադարան ձեռ. 212, 157ա, մանրանկարիչ Աւագ:

Նկ. 8. Մանուիլ II Պալէոլոգոս կայսեր ընտանեկան պաշտօնական դիմանկարը, 1403-1405, Լուվր, Դիոնիսիոս Արիոպագացու Ճառընտիր, 2ա:

Նկ. 9. Մեդալիոնով Օրանտ Տիրամայրը Մովսէս մարգարէի եւ Երուսաղէմի պատրիարք Էթիմիոսի միջեւ, սրբապատկեր, 13-րդ դար, Սինայի Սբ. Կատարինէ վանք:

Նկ. 10. Մովսէս մարգարէն եւ Անկէզ մորենին, Հեթում իշխանի Ճաշոց, 1286, Մատենադարան ձեռ. 979, 229ա:

Նկ. 11. Աւետման տօնի կանոնի անուանաթերթ, Հեթում իշխանի Ճաշոց, 1286, Մատենադարան ձեռ. 979, 295ա:

Նկ. 12. Մատթէոսի Աւետարանի անուանաթերթ. Աւետարան, 13-րդ դար, Մատենադարան ձեռ. 9422, 21ա:

© National Library of Armenia